Առաջադրանքների օրինակներ

Նմուշ 1. Արտակը ցանկանում էր Մարտի 8-ի կապակցությամբ շնորհավորել իր քույրիկին: Նա մի գիրք գնեց և վրան մակագրեց.

Նվիրում եմ քույրիկիս՝ Աստղիկին:

Սիրելի՛ Աստղիկ, շնորավորում եմ քո տոնը, և մաղթում հաջողություն:

Լուսինեն կարդաց մակագրությունը և ասաց, որ Արտակը թույլ է տվել մեկ ուղղագրական և մեկ կետադրական սխալ:

Ո՞ր տարբերակում են այդ սխալները ճիշտ նշված:

1. ***Քույրիկիս*** բառից հետո ստորակետ պիտի լինի, իսկ ***մաղթել***-ը գրվում է ***խ*** -ով:
2. ***Սիրելի*** բառի վրա շեշտ չպիտի լինի, իսկ ***քո*** բառը պետք է գրել մեծատառով:
3. ***Տոնը*** բառից հետո ստորակետ չպիտի լինի, իսկ ***շնորավորել***-ում ***ր***-ից հետո պետք է ***հ*** գրել:
4. ***Աստղիկ*** բառից հետո ստորակետ չպիտի լինի, իսկ ***հաջողություն*** -ը գրվում է ***չ***-ով:

Նմուշ 2. Փոստատարը Արայի մայրիկի համար բանաստեղծներից մեկին նվիրված երեկոյի հրավիրատոմս բերեց: Արան անզգուշաբար հյութ թափեց հրավիրատոմսի վրա, այնպես, որ բանաստեղծի անունը չէր երևում:

Հրավիրատոմսը այսպիսի տեսք ստացավ՝



Ո՞ւմ հոբելյանական երեկոյի հրավիրատոմսն էր դա:

Պատասխան՝ _____

Նմուշ 3. Շուշանիկը նկուղում մի հնամաշ գրքույկ գտավ, որի կազմի վերևի մասը պատռված էր. չէր երևում հեղինակի անունը, իսկ վերնագրի բառերն էլ մասամբ ջնջված էին: Գրքի կազմը այսպիսի տեսք ուներ՝

Ո՞վ է այդ ստեղծագործության հեղինակը:

Պատասխան՝ _____

Նմուշ 4. Խանութի ցուցափեղկին՝ ապրանքների նկարների դիմաց գրված էին դրանց անունները: Ապրանքներից մեկի անունը գրված էր սխալով:

Ա. Ո՞ր ապրանքի անունն է սխալով գրված:

1 հեծանիվ

2 հեռադիտակ

3 դահուկներ

4 ակնոցներ

Բ. Բացատրի՛ր քո ընտրած տարբերակի սխալը:

Պատասխան՝ _____

Նմուշ 5. Տրված պատկերներից յուրաքանչյուրին համապատասխանում է հետևյալ գործողության անուններից մեկը: Գծով միացրու պատկերները և գործողության անունները: Մեկ զույգը միացված է քեզ օգնելու համար:



Նմուշ 6. Աշակերտներին հանձնարարվել էր տրված բառերով կազմել նոր բառեր: Լիլիթը ***ամիս*** բառով կազմեց ***եռամյա*** բառը: Անին ասաց, որ ***եռամյա*** բառի արմատը ***ամիս***-ը չէ:
Համաձա՞յն ես արդյոք Անիի հետ (նշի՛ր մեկ վանդակ):

☐ Այո

☐ Ոչ

Հիմնավորի՛ր պատասխանդ:

Նմուշ 7. Անահիտը աշխարհագրության ուսուցչի հանձնարարությամբ գրել էր **կիսանապատային** գոտու մասին հետևյալ տեքստը:

Կիսանապատ

Այստեղ եղանակը երաշտային է: Այդ պատճառով էլ հողը չոր է, բուսածածկը՝ նոսր: Տեղ-տեղ հանդիպում են փշոտ թփեր:

Վարդանին հանձնարարված էր գրել **անտառի** մասին: Ուսուցիչն ասաց, որ նա կարող է օգտվել Անահիտի գրածից՝ որոշ բառեր փոխարինելով իրենց հականիշներով:

Լրացրո՛ւ ներքևի տեքստը՝ բաց թողած տեղերում գրելով Անահիտի բառերի **հականիշները**:

Անտառ

Այստեղ եղանակը _____ է: Այդ պատճառով էլ հողը _____ է, բուսածածկը՝_____ : _____ հանդիպում են հսկա ծառեր:

Նմուշ 8. Արսենը, Վարդուհին և Վարդուհու հայրիկը մոտեցան մի կրպակի, որտեղ տաք բլիթներ էին վաճառվում: Կրպակի ցուցանակին նրանք կարդացին հետևյալ գրությունը՝

Բլիթներ կարելի է նաև պատվիրել: Առաքումը անվճար:

Արսենը, կարդալով ցուցանակի վրա գրվածը, ասաց, որ երկրորդ նախադասության մեջ կետադրական սխալ կա: Վարդուհին կարծում էր, որ սխալը կետադրական չէր: Նա չհամաձայնվեց Արսենի հետ և ասաց, որ կարող է երկրորդ նախադասության մեջ ավելացնել այնպիսի մեկ բառ, որ ամեն ինչ ճիշտ դառնա:

Վարդուհու հայրիկն ասաց. «Մի՛ վիճեք. երկուսդ էլ ճիշտ եք»:

Ա. Արտագրի՛ր ցուցանակի երկրորդ նախադասությունը՝ նրանում կատարելով **Արսենի** ուղղումը (ավելացրո՛ւ մեկ կետադրական նշան):

Արսենի ուղղումը՝_____

Բ. Արտագրի՛ր ցուցանակի երկրորդ նախադասությունը՝ նրանում կատարելով **Վարդուհու** ուղղումը (ավելացրո՛ւ մեկ բառ):

Վարդուհու ուղղումը՝ _____

Նմուշ 9. Վահեն բակում հավաքված ընկերներին պատմում էր. «Գիտե՞ք, այսօր պատմության դասին մեր դասարանի Հայկն ասաց, որ Տիգրան Մեծը թագավոր է օծվել Աղձնիք նահանգի եկեղեցիներից մեկում»:

Համաձա՞յն ես արդյոք Հայկի հետ (նշի՛ր մեկ վանդակ):

☐ Այո

☐ Ոչ

Հիմնավորի՛ր պատասխանդ:

Նմուշ 10. Պարոն Սանթրոսյանը հանձնարել էր Գևորգին գրել Ավարայրի և Սարդարապատի ճակատամարտերի մասին: Դրանցից առաջինը տեղի է ունեցել 451 թվականին, երկրորդը՝ 1918-ին:

Հետևյալ բառերը դուրս են բերված Գևորգի գրած տեքստերից՝

հրետանի, նիզակ, սպարապետ, խմբապետ, հրացան, իշխան:

Ա. Ընտրի՛ր 2 բառ, որոնք Գևորգը հավանաբար օգտագործել է Ավարայրի ճակատամարտի նկարագրության մեջ:

Պատասխան՝_____ և _____

Բ. Ընտրի՛ր 2 բառ, որոնք Արտակը հավանաբար օգտագործել է Սարդարապատի ճակատամարտի նկարագրության մեջ:

Պատասխան՝_____ և _____